

## ՆՈՐԱՀԱՅՏ ՆՅՈՒԹԵՐ ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ



Եսրոպ թաղիադյանը հանդիսանում է 19-րդ դարի առաջին կեսի հայ գրականության կառուցման դեմքերից մեկը: Նրա ողջ կյանքը արկածների մի շղթա է ներկայացնում: Տաղիներ շարունակ ճանապարհորդական ցուպը ձեռքին շրջագայել է նա աշխարհի շատ վայրեր, ամենուրեք ճշմարտություն որոնելով, բայց տարաբախտաբար ոչ մի տեղ էլ չգտնելով այն, մինչև իր կյանքի վերջին օրերն էլ մնացել է հալածված:

Թափառաշրջիկ ու աստանդական կյանքի պայմաններում անգամ թաղիադյանը կարողացել է արտագրել մի շարք արժեքավոր երկեր: Բազմակողմանի է եղել նրա գրական գործունեությունը. նրա բեղմնավոր գրչի տակից դուրս են եկել և՛ շափածո, և՛ արձակ, և՛ հրապարակախոսական, և՛ պատմական երկեր:

Բացի գրական անխնջ մշակ լինելուց, թաղիադյանը հանդես է եկել նաև որպես բազմահմուտ, գիտակ ու պատրաստված մանկավարժ: Անկասկած, թաղիադյանն իր ապրած ժամանակաշրջանի ամենազարգացած ու առաջավոր հայերից մեկն էր հանդիսանում:

Մեր նորահայտ նյութերը ընդգրկում են թաղիադյանի կյանքի ու գործունեության հինգ տարվա մի ժամանակամիջոց, բայց նախքան դրանց անցնելը անհրաժեշտ ենք համարում տալ նրա համառոտ նիստադրությունը:

Թաղիադյանը ծնվել է 1803 թվին Նրևանի մոտակա Կարբի գյուղում. մանուկ հասակում նա զրկվում է հորից ու մնում տառի խնամքի տակ: 1816 թվին տեղավորվում է

Էջմիածնում, որտեղ և ստանում է իր սկզբնական կրթությունը ժամանակի հայտնի գիտնականներ Պողոս վարդապետ Ղարաբաղցու և Զաքարիա եպիսկոպոսի մոտ:

Թաղիադյանը շատ էր սիրում շրջագայել. նա շրջագայում է Հայաստանի և նրա հարևան երկրների մի շարք վայրերը ու մոտիկից ծանոթանում ժողովրդի կյանքին ու հոգեբանությանը. նա ականատես է լինում պարսկական բռնություններին, հարկահավաքների, ֆառաշների կողմից շարժվող ժողովրդի անլուր կեղեքմանն ու հարստահարմանը:

1822 թվին, Նփրեմ կաթողիկոսի հետ միասին, նա գտնվում էր Հաղպատում. այստեղ էլ նա որոշում է Եմրոպ գնալ՝ ուսում ստանալու համար: 1923 թվին, դարնանը, կաթողիկոսի հանձնարարականով թաղիադյանը մեկնում է Հնդկաստան, ճանապարհին հանդիպումներ ունենալով տեղական հոգևոր իշխանությունների ղեկավարների հետ: Նրա ճանապարհորդության վերաբերյալ տեղեկությունները սկսվում են Զուլայից, որտեղից նա անցնում է Բուշիր, Բումբա և ապա Կալկաթա: Նրկար կանգ չառնելով Կալկաթայում, թաղիադյանը մեկնում է Դաքա, ուր գտնվում էր Էջմիածնի նվիրակ Պողոս եպիսկոպոսը: Դաքայում էր գտնվում նաև Երոտաղեմի հայոց Պատրիարքի նվիրակ Աբրահամ վարդապետ Բյուրականցին, որի հետ սիրով մտերմանում է թաղիադյանը: Երկու նվիրակները Դաքայում էին գտնվում հանգուցյալ Հարություն Միքայելյանի կրտսերի գործով, որի կին Մարիամ խաթունը էր համաձայնում կատարել ամուսնու կտակը, որը հետագայում էլ կեղծ դուրս եկավ:

Այդ օրերին, Դաքայի քրիստոնեական եկեղեցիներն այցելելու նպատակով, Դաքա

է գալիս Կալկաթայի անգլիական եպիսկոպոս Ռիչինալդ Հեբբը, մի լուսամիտ, բարձր գաղափարներով տոգորված կրոնական, որը հետագայում խոշոր դեր է խաղում Թադիադյանի կրթության գործում: Դաքայում երկու հայ հոգևորականների և Հեբբի միջև ստեղծվում են հարաբերություններ, որոնք աստիճանաբար սերտ բարեկամական բնույթ են ընդունում: Հեբբի հետ ամելի մոտ հարաբերություններ է մշակում Նրուսադեմի Պատրիարքի նվիրակ Աբրահամ վարդապետը:

Հուլյս շունենալով Մարիամ խաթունի հետ համաձայնության գալու 1824 թվին Աբրահամ վարդապետը Թադիադյանի հետ միասին տեղափոխվում են Կալկաթա: Աբրահամ վարդապետը նվիրակության գործերով մեկնում է հնդկական ուրիշ հայաբնակ քաղաքներ, իսկ Թադիադյանը ուսուցչի պաշտոն է ստանձնում Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում, որը հիմնադրվել էր 1821 թվին տեղի հայ հասարակության համաքական միջոցներով: Դպրոցի հիմնադրման դրամագլուխ հանդիսացավ 18-րդ դարի վերջում երկու բարերարների՝ Աստվածատուր Մուրադխանյանի և Մնացական Վարդանյանի, որոնք և համարվեցին նրա հիմնադիրները, կտակած փոքր գումարները: 1820 թվից Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցին տարեկան 1500 ոսկի էր հատկացնում դպրոցին: Հետագայում զանազան մարդկանց կողմից արված նվերների շնորհիվ դրամադրուխն զգալիորեն աճեց: Թադիադյանի ուսուցչության օրոք Մարդասիրական ճեմարանն ընդարձակվեց՝ Հարություն Գալուցյանի դպրոցը նրան միացվելու հետևանքով: Դպրոցում ամենից շատ ուշադրության էր արժանանում հայոց լեզուն, որի ուսուցման համար պահում էին երեք ուսուցիչ, դպրոցն ուներ նաև երկու ուսուցիչ՝ անգլերեն և մեկ ուսուցիչ էլ՝ բենգալերեն լեզուների ուսուցման համար:

Մարդասիրական ճեմարանում Թադիադյանը երկար չի մնում. մի բարեհաջող դեպքից դրված նա թողնում է ուսուցչությունը: Աբրահամ վարդապետը Կալկաթա վերադառնալով հորդորում է նրան իր հետ Նրուսադեմ մեկնիլ՝ այնտեղ վանքում մնալու համար: Թադիադյանը տալիս է իր համաձայնությունը. այդ օրերին Ռիչինալդ Հեբբը եպիսկոպոսն այցելում է հայոց եկեղեցին, մասնակցում ժամերգության ու մեծարվում Աբրահամ վարդապետի կողմից: Մեկնելու Հեբբը Աբրահամ վարդապետին հրավիրում է փոխայցելություն կատարել իր եկեղեցին,

ուր հանդիսավոր արարողությամբ քահանաներ պիտի ձեռնադրեն:

Եկեղեցում Ռիչինալդ Հեբբը Աբրահամ վարդապետին բազմեցնում է իր կողքին, իսկ երբ գալիս է այն պահը, որ նա ձեռք պետք է դնե Նորընթանների գլխին, հայ վարդապետին խնդրում է, որպեսզի նա էլ իր ձեռք դնե և օրհնե քահանայացուներին: Այս եզակի դեպքը մեծ ազդեցություն է թողնում Կալկաթայի հայ գաղութի վրա: Թադիադյանը, որ ներկա էր եկեղեցում, դրում է.

«Եւ երկուքն ի միասին եղեալ ձեռս՝ ըստ Իւրաքանչիւր լեզուի, մին հայ, միւս անգլերէն առանձին զաղօթս զայս (ասէր) «Ես դեմ գձեռս» և այլն, ընդ որ բոլոր աշխարհ զարմացաւ, զոր բովանդակ Կալկաթոյ հայքն առհասարակ գրեն այսպես. «Ճայտնի է յարգութեան ձերում, որ յարգոյապատիւ եպիսկոպոսն՝ Անգլիոյ հրաւիրեալ դժայտագոյն Աբրահամ վարդապետ սրբոյն Սաղիմայ, պատուեալ զնա հրապարակաւ... անդր քան զակնկալութիւն մերս»):

Եպիսկոպոսին փոխադարձաբար պատվելու համար Աբրահամ վարդապետը հայ հասարակության խնդրանքը պատարագ է մատուցանում Ս. Նազարեթ եկեղեցում և հատկապես սեղանի վրա աթոռ է դնում հրավիրված եպիսկոպոսի համար, բայց վերջինս չի նստում, այլ ամբողջ ժամանակ շոգած աղոթում է, ամելի մեծ հիացմունք պատճառելով հայերին:

Այս բոլորը տեսիլ է ծառայում Թադիադյանին մի համարձակ միտք հղանալու — այն է՝ խնդրել Ռիչինալդ Հեբբին, որպեսզի իրեն ընդունի Կալկաթայի «Եպիսկոպոսական ճեմարան» կոչվող անգլիական հոգևոր բարձրագույն դպրոցը: Աբրահամ վարդապետը սիրով հանձն է առնում անձամբ խնդրել այդ մասին և իր բարեկամ սարկավագ Թադիադյանին հետը վերցնելով գրում է եպիսկոպոսի մոտ: Այս պատմությունն անելով Թադիադյանը գրում է. —

«Կարի խմատուն տուած է նախնեաց, Թէ մարդս մարդով միայն ինի մարդ, Քանգի և գոճար և մետաղ հաճեաց, Անփորձ ի մարդոյ ոչ շողանի և զարդս\*\*»):

Աբրահամ վարդապետը Հեբբին հայտնում է, որ Նրուսադեմի հայոց Պատրիարքարանը շատ ճանապարհորդներ են այցելում, մանավանդ անգլիացիներ, և որ Հայոց Պատրիարքը նրանց ընդունելու ժամանակ դժվար

\*) (է. — Մեսրոպ Թադիադեան, «Գործ» ամսագիր 1917 թ. Նո 9—10, էջ 95:

\*\*) Նույնը, էջ 95:

րությունների առաջ է կանգնում, որովհետև միաբանության անդամների մեջ անգլերեն լեզվին տիրապետողներ չկան. այս պատճառաբանությամբ նա խնդրում է Հերբին, որպեսզի սարկավազ Թադիադյանին ընդունի եպիսկոպոսական ճեմարանը և հնարավորություն տա անգլերեն սովորելու, միաժամանակ պատրաստակամություն հայտնելով անձամբ հոգալու նրա ուսման ծախսերը: Եպիսկոպոսը երկար մտածելուց հետո պատասխանում է, որ սարկավազի տարիքը չի համապատասխանում ընդունելության կանոնադրության և կարող է նրան ընդունել միայն ոչ իբրև աշակերտ, այլ իբրև «զոք մտերիմ, սիրելի» ու բոլոր ծախսերն էլ ինքը կ'հոգա: Արարհամ վարդապետը իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնում այդ առթիվ, իսկ Թադիադյանը, որ արդեն մի փչ սովորել էր անգլերեն, հետևյալն է գրում. «Տէր իմ, աղաչեմ զտէրութիւն Զեր զի ընկալցի զխոնարհ շնորհակալութիւնս իմ յաղագս ընդունելոյ զիս ի ձեր մեծակառոյց համալսարանն»<sup>\*)</sup>:

Թադիադյանի կյանքում նոր շրջադարձ է մկսվում, իրականանում են ուսում, գիտություն ձեռք բերելու նրա վաղուցվա երազները: Ենւ հղև,—գրում է նա,—փոխադրումն իմ ի Ճեմարանէն Հայոց, յորում դաստիարակ էի, ի Համալսարանս, յորում դաստիարակիմս, 1826, փետրուարի 12, յաւուր կիրակէի»<sup>\*\*)</sup>:

Նրա նպատակն էր եվրոպական կրթություն ստանալ և այդ կրթությունն օգտագործել հայոց մտավոր կենտրոն էջմիածնում. այս մասին նա գրում է. «Ինձ, որ փափաղելի էին գանձք իմաստութեան, ի բայթողեալ զայն, զհետ պնդեցայ այնմ, զոր սիրեաց անձն: Կալայց և ոչ թողից զնա, մինչև ածից ի տուն մօր իմոյ և ի սենեակ յղացելոյն զիս ի սուրբ էջմիածին»:

Թադիադյանը շորտ տարի եպիսկոպոսական ճեմարանում մնալով, բացի անգլերեն լեզվից, սովորում է նաև լատիներեն, հունարեն ու պարսկերեն: Այսպիսով աշխարհի մեծագույն գրական երկերը մատչելի են դառնում նրան:

Թադիադյանն իր ճեմարանական կյանքից մի քանի դեպքեր մանրամասնորեն նկարագրել է Հերբի «Պաղեստին» քերթվածքի իր կատարած հայերեն թարգմանության գրքով, տպագրված 1830 թվին Կալկաթայում,

<sup>\*)</sup> (Հօ.— Մեսրոպ Թադիադեան, «Գործ» ամսագիր 1917 թ. № 9—10, էջ 95:

<sup>\*\*)</sup> Նույնը, էջ 96:

և իր մի այլ աշխատության մեջ, որի վերնագիրն է. «Պատմութիւն Ռիշինալդ Հերբ Սրբազան եպիսկոպոսի Անգլիացոց, բնդհանուր վերառեսչին Հնդկաստանեաց: Ուր և յաղագս ծանօթեալոյ նմա Սրբազան Պօղոս եպիսկոպոսին էջմիածնի և սրբազան Արաքսամ վարդապետ ծայրագոյն նիւրակին Սրբոյ Երուսաղէմի»:

Թադիադյանի բարերար Ռիշինալդ Հերբ եպիսկոպոսը այցելության է գնում Մադրաս քաղաքի և նրա շրջանի եկեղեցիները. սակայն այդ շրջագայության ժամանակ էլ վախճանվում է: Թադիադյանն իր բարերարի մահվան լուրն ստանալով, դիմում է ճեմարանի տեսուչ Միլսին և խնդրում նախօրոք հայտնել իրեն, եթե իր բարերարի մահվամբ հետագայում որևէ փոփոխություն պետք է տեղի ունենա իր վիճակի մեջ: Վերադառնալով Միլսը Թադիադյանի վիճակի մասին գրում է անգլիական եկեղեցու գլուխ քննորդի եպիսկոպոսին. վերջինս կարգադրում է կատարել Ռիշինալդ եպիսկոպոսի մտադրությունները հայերի նկատմամբ, այսինքն Կալկաթայի եպիսկոպոսական գանձարկղից թողակ տալ ոչ միայն Թադիադյանին, այլ և երկու հայ սարկավազի և ընդունել ճեմարան ձրի ուսանելու պայմանով:

Ճեմարանի դասընթացն ավարտելուց հետո Թադիադյանն մի առժամանակ դեռ մնում է ճեմարանում, ուր նա ձեռք էր բերել րադմակոդմանի զարգացում:

Թադիադյանը գրական ասպարեզ է մտնում 1829 թվականին, տպագրելով իր մի թարգմանությունը, որը կրում էր հետևյալ վերտառությունը. «Հնգունի Գրովտիոսի ճըշմարտութիւն Քրիստոնէական հաւատոյ, ի լատինէ ի հայ ամ Մեսրոպ Դաւթեան Թադիադեանց Կարեցի, սարկաւազ Սրբոյ էջմիածնի»:

Հաջորդ տարում թարգմանում է իր բարերար եպիսկոպոսի մի քերթվածքը՝ «Պաղեստին. պալեսալ քերտած Գեր. Տ. Ռիշինալդայ Երեւան եպիսկոպոսի Կալկաթա, ի հայ ամ Մեսրոպ Դաւթեան Թադիադեանց, սարկաւազ Սրբոյ էջմիածնի: Կալկաթա, ի տպարանի եպիսկոպոսական ճեմարանի, 1830»:

Այս նույն թվին Թադիադյանը տալիս է իր ինքնուրույն գործը՝ «Բիցարանութիւն, առաւ Մեսրոպ Դաւթեան Թադիադեանց, սարկաւազ Սրբոյ էջմիածնի, տպագրեալ ի զործատան եպիսկոպոսական ճեմարանի Կալկաթա, ի պարօն Ծակովրա: Սայկսեան տպագրէ 1830»:

1830 թվին նոր Զուլայում պատրաստու-

թյուններ էին տեսնում մի նոր դպրոց հիմնելու. Մադրասում վախճանված շուղայեցի Գրիգոր Սամյան վաճառականն այդ նպատակով մի գումար էր կտակել, բայց շուղայեցիները որոշել էին չսպասել մինչև այդ գումարի ստացումը և արագացնել

դպրոցի բացումը: Նոր շուղայեցիները Ս. Ամենափրկիչ Աթոռի հոգաբարձու և հանրոջ Հակովբ վարդապետի, տասը քահանաների ու տասներկու աշխարհականների ստորագրությամբ, Թաղիադյանին հղում են հետևյալ գրությունը.—

### Յարգյ պարոն Մեսրոպ Դարեան Թաղիադեանց,

Եթե մարդ ծնեալ վասն հայրենեաց, պարտ է կեալ վասն հայրենեաց և ծառայել նմին, որքան առաւել ևս եթէ կեցցէ որ ծառայել ոչ միայն հայրենի ուսմանց և բարեկարգութեանցն արտաքնոց, այլև ներքին կրօնից և աստուածապաշտութեան նոցա: Ապաքէն ի բազմաց հետէ ցանկացեալ և ցարդ անկատար մնացեալ ի մեզ հաստատութիւն ճեմարանին ի Զուղա և հետզհետէ յանհրահանգութեանց իսպառ անհետացեալ ուսման ի մէջ հասարակութեանս բնակելոյ ի Զուղա համարյա թէ զխտովին խոնարհեալ է պատիւ եկեղեցւոյ և յարգ հայրենի աստուածատուր հաւատոյ մերոյ առ անուղղայս ոմանս ի մերազանց, որք սարտուցեալ ի ստէնէ մօրն որ ծնան զնոսա, զնանի գիրկս հոռովական գայլոցն, որք ի զգեստ ոչխարաց մտեալ ի հօտն Քրիստոսի, խաղաղանեն զնոսա ի խոհերս մարդապաշտ

մոլորութեան և յաւիտենական կորստեան հոգւոցն իւրեանց:

Յայս ամենայն հայեցեալ մեր ապաքէն ազգովին խնդիր մատուցանեմք առաջի ազգասիրութեան ձերոյ զի թէպէտ դժուարին է վասն բազմամեան օտարութեան ձերոյ ի հայրենեացդ և կարօտութեանդ, սակայն Դուք ևս որպէս վայել է հշմարիտ գիտնոց և ճշմարիտ բարեպաշտից, զօգուտն հասարակաց յաւէտ ընտրելով քան զշահ անձին առանձինն՝ յանձն առջիք դաստիարակել զմանկունս մեր գոնեա տարեկան ժամանակաւ և եթէ եւ առ այս որպէս աներկբայ եմք մեք Աստուծոյ ձեզ վարձատրութեան. նոյնպէս և ազգային միաբերան շնորհակալութեանս մերոյ և օրհնութեանց հազարաց ի կեանս և ի զարգացումն կենացդ պատուականաց: Ողջ լին բազում ազգասիրութեամբ ի պարծանս մեր»):

(Տակը վարդապետի, տասը քահանաների և տասներկու աշխարհականների ստորագրությունները):

Ընդունելով նոր շուղայեցիների հրավերը 1831 թվի մայիսին, Թաղիադյանն ուղևորվում է Նոր Զուղա: Այստեղ Թաղիադյանը տեսնում է, որ առաջնորդարանի սնդուկը դատարկ է, իսկ կտակված գումարներն էլ Մադրասից չեն ստացվել: Հուլիսին նա մեծ հանդեսով բաց է անում դպրոցը, անվանելով այն «Ամենափրկչյան ճեմարան»: Նորաբաց դպրոցը նա ղեկավարում է մինչև նոյեմբեր ամիսը, երբ գծտություններ են սկսվում Նոր Զուղայի ժողովրդի ու առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի միջև: Վերջինս ստիպված է լինում թողնել քաղաքն ու հեռանալ. նրա օրինակին շուտով հետևում է նաև Թաղիադյանը, որը Զուղան թողնելով վերադառնում է իր հայրենիքը՝ Երևան:

Նորընտիր կաթողիկոս Հովհաննես Կարեցցին Թաղիադյանին հրավիրում է էջմիածին և վանքի դպրոցի կառավարիչ կարգում: Որոշ ժամանակ անց նրան է հանձնվում նաև կաթողիկոսի դիվանապետի պաշտոնը. այդ առթիվ նրանից ստանում են հետևյալ պարտավորեցուցիչ գրությունը. «Ծանուցանալով ձերն Աստուծոյ կապակցիմ ընդ

սրբազան Սիմահոգոսի կատարել զպաշտօն վարժապետութեան արուեստից ազատականաց և պաշտօն խորհրդական գրագրութեան Կաթողիկոսի Ամենայն Հայոց և սրբազան Սիմահոգոսի, անարատ խորհրդապահութեամբ, սրբութեամբ և անկեղծ հաւատարմութեամբ՝ երեք տարի ժամանակաւ, տարին հարիւր և քսան թուման վարձու եւ այս առանց իրիք տրտնջանաց ցորչափ պաշտօնը իմ յառաջ գնան կանոնաւոր խղճմտանօք և օրինաւոր կարգաւորութեամբ: Արտաքոյ սոցա՝ ռոճիկ մասամբ չունիմ ինչ պահանջիք ի սրբազան կառավարութենէ Սրբոյ էջմիածնի:

Մ. Դ. Թաղիադեանց

Յամի Տեառն 1833,

յունիսի մուտի

ի օրը էջմիածին\*\*)

Սակայն, հակառակ իր վրա վերցրած պարտավորության, Թաղիադյանն այդ պաշտոնում մի տարուց ավելի մնալ չի կարողանում. դրա պատճառներն էին հանդի-

\*) Լէս.— Մեսրոպ Թաղիադեան, «Դործ» ամսագիր 1917 թ. № 9—10, 12 103:

\*\*) Նույն, էջ 165:

սանում մի կողմից նրա աննախանձելի վիճակը էջմիածնում և մյուս կողմից տգետ միաբանների ամենօրյա բամբասանքներն ու հաճախակի կրկնվող զրպարտությունները: Այն ողորմելի պայմանները, որ վանական կառավարչությունն ստեղծել էր թաղիադյանի ապրուստի համար, բավականին ընդունելի կերպով նկարագրված ենք տեսնում նրա մի ոտանավորի մեջ, որը կրում է «Ցուցակ ստացնալ աղխից տան իմոյ ի ծայրագոյն կառավարչէն սրբոյ Արժոյս» վերտառությունը: Տիրող դրությունն այնքան էր նրան վհատեցրել, որ նա պատեհ առիթի էր սպասում էջմիածնից հեռանալու համար:

1834 թվի հունվարի 28-ին Լոնդոնից կաթողիկոսի անունով Քրիստոնեական գիտություն տարածող ընկերություն»-ից մի

Ամենաւարճաւան Զօր ի Քրիստոս Տեառն Յովհաննու, Կարդղիկոսի Ամենայն Հայոց Ազգի և ծայրագոյն Պատրիարքի Առաքելական եկեղեցւոյ և սրբոյ Արժոյսն էջմիածնի.

Ամենաւարճաւան Տէր,

Գերապատիւ ընկերութիւն տարածելոյ Քրիստոնէական գիտութիւն, ի դարչւց հետէ հաստատեալ, ի Լոնդոն, ընդ գլխաւորութեամբ ամենաւարճաւան հայրապետի և միտրապոլիտի ամենայն Անգղիական եկեղեցեաց, Արքեպիսկոպոսին Կանդեբրիայ, միշտ փափագելով տարածել զփառս Աստուծոյ, և զգիտութիւն սրբոյ հաւատոյ, հրամայեաց ինձ յայտնել տէրութեան ձերոյ զառարկայն, յորոյ վերայ աշխատի միշտ, և յատկապէս՝ դրել ձեզ յաղագս յարգոյս պատիւ սարկաւագի եկեղեցւոյ ձերում, Մեսրոպայ Դաւթեան Թաղիադեանց:

Չէ անծանօթ մեծի տէրութեանն ձերոյ, զի քանի ամօք յառաջ սկսաւ բարեկամական հաղորդակցութիւն ի մէջ եպիսկոպոսաց Հայոց եկեղեցւոյն և Ռիչինսլոյայ Յերբեան եպիսկոպոսի Անգղիական եկեղեցեաց ի Հրնդիկս առն արժանւոյ յիշատակաց օրհնութիւն:

Եւ զի յարգոյսպատիւ սարկաւագն Մեսրոպ Դաւթեան կատարեաց զիւր ուսմունս յեպիսկոպոսական ճեմարանին Կալկաթայ, ընկալելալ ի մէջ զհաւանութիւն անուանակոչելոյ նորա եկաւոր աստուածաբանութեան աշակերտ ընդ պաշտպանութեամբ և ծախսով ընկերութեանս:

Ջայս բարեկամական հաղորդակցութիւն ընկերութեան տարածող Քրիստոնէական գիտութեան ցանկայ վերանորոգել, և փափագի ևս օգնել ըստ կարեաց իւրոց առ ան-

դրութիւնն է ստացվում, ուր հիշատակված էր սարկավագ Մ. Թաղիադյանի կատարած այն մեծ դերի մասին, որ նա տարիներ առաջ խաղացել էր Կալկաթայի Եպիսկոպոսական ճեմարանում սովորելու ժամանակ, բարեկամական կապեր ու հարաբերություններ ստեղծելով հայոց ու անգլիական եկեղեցիների միջև: Շեշտվում էր, որ նրա Կալկաթայից հեռանալու հետևանքով խզվել են այդ կապերը, որի համար էլ ընկերությունը ցանկություն է հայտնում նորից վերանորոգված տեսնել այդ կապերը: Մեզ մոտ պահպանվել է այդ գրության հայերեն թարգմանությունը, որը կատարել է հենց ինքը Թաղիադյանը: Նկատի ունենալով նրա կարևորությունը Թաղիադյանի կենսագրության համար, բերում ենք այն ստորև.—

խախտ պահելոյ զանկախութիւն և զանարատութիւն եկեղեցին Անգղիոյ, որոյ մեքս պատկանիմք, շուրի երբեք զտեսնել զբաւելոյ իշխանութիւն ինքն ի վերայ առաքելական եկեղեցեաց, այլ ընդհանրապէս, ցանկալ օգնական լինիլ նոցա ընդդէմ օտար յարձակմանց, մասնաւանդ հաղորդելով նոցա զգիտութիւն այնպիսի գրեանց, որք իցեն պիտանիք պահպանութեան անկախութեան և անարատութեան նոցա. սմին իրի ընկերութիւն մեծապէս ուրախացաւ, լսել, զի յարգոյսպատիւ սարկաւագն Մեսրոպ Դաւթեան թարգմանեալ է ի հայ լեզու, զանհակառակելի զգիրս իմաստուն հեղինակիս մերոյ Բարրոնեան վարդապետի ընդդէմ կեղծեալ գլխաւորութեան Պապին Հռովմայ, և կամի նաև մատուցանել զիւր օգնականութիւն ի թարգմանել և տպել զայնպիսի գրեանս, որք կարիցեն պիտոյանալ սրբոյ եկեղեցւոյդ Հայոց: Ընկերութիւնն հաւաստեալ գիտէ, զի նա գիտութեամբ անգղիական լեզուին, որպէս և ընդհանրական մակացութեամբ և բնական ձրիւն կարող է թարգմանել ի հայ լեզու զբազում արժանաւոր գրեանս, որք հաւանելի իցեն և ընկալելալ ի ձերոյ տէրութենէ: Մեզ հայտնի եղև, զի զաւարդէն իսկ թարգմանեալ է ի հայ լեզու զաղօթամատոյցն եկեղեցւոյն Անգղիոյ զոր և տպագրեալ է արդ ի տպարանի եպիսկոպոսական ճեմարանի մերոյ ի Կալկաթայ զորոյ զմի հատ որ առաքեսցուք ի

վերծանութեան Տէրութեան ձերոյ, ի հասանիլ նոցա մեզ ի Հնդկաստանէ:

Այժմ մնալ ինձ միայն զայս խնդրել, զի տէրութիւն ձեր բարեհաճեցի ընդունիլ զողջոյն համօրէն ընկերութեան հանդերձ պատարագօք բարեկամութեան նորա և օգնա-

կանութեանն, որ սովին մատուցանի, ընդ որս և խոնարհ պաղատանք մեր վասն հաշողութեան փառաց եկեղեցւոյն Հայոց և Ազգի, ի ձեռն Մեծի Տէրութեան ձերոյ ամենահազանդ և խոնարհ ծառայի ի Քրիստոս

Գէորգայ Տավիւնսեայ

Ատենադպրի ընկերութեան տարածողի գրիստոնէական գիտութիւն:

(Լոնդոն, զեկտեմբեր 10, 1833)

Ուղիղ թարգմանութիւն յանգղիականէ ի հայ Մ. Դ. Թաղիադեանց\*):

1834 թվի փետրվարի 23-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով մի գրութիւն էլ ստացվում է Երևանի նահանգապետ զեներալ Վասիլի Բեհրուզովից. այս գրութիւնից պարզվում է, որ Թաղիադեանի Կովկասում լեզվագետի համբավ էր վայելում: Իշխան Վ. Բեհրուզովն իր գրութեան մեջ հայտնում էր Լաթուլիկոսին, որ Վրաստանի կուսակալ զեներալ—ադյուտանտ բարոն Ռոզենը պահանջում է իր մոտ ու-

ղարկել տիրացու Մ. Թաղիադեանին՝ մի շատ կարևոր գրութիւն թարգմանելու համար. միաժամանակ հայտնում է, որ ճանապարհորդութեան հետ կապված ծախսերը, ինչպես և թարգմանութեան համար, կվճարվի Գեներալ Վ. Բեհրուզովի գրութիւնը գրված է ռուսերեն և հայերեն լեզուներով. նույն բովանդակությամբ, ուստի ստորև բերում ենք միայն հայերեն ընագրի տեքստը ամբողջությամբ.—

Նորին Վեհափառութեան Պատրիարքի Ամենայն Հայոց և Ասպետի Յովնաննու

Ձերդ Վեհափառութիւն

Ողորմած Տէր.

Առաջելով զհետ այսր գրութիւն պարոն կուսակալին Վրաստանու ղէներալ օտ ինֆանտերի ղէներալ ադյուտանտի և կապիւլէրի բարոն Բոզէնի առաջնոյ, զոր ընկալալ զհետ հրամանագրի առ իս Նորին Բարձր Գերազանցութեան ի 11 փետրուարի, № 802, խոնարհարար խնդրեմ հրամայել տիրացուի հայոց Մեսրոպայ Թաղիադեանց, որ հարկաւոր է Նորին Բարձր Գերազանցութեան վասն ինչ ինչ գործոց, որք ո՛չ վերաբերին առ հոգևորական գործս, զի եկեղեցի առ իս յերևան, վասն տալոյ նմա զբիւնթ և զծախս ի պէտս ձիանց, հարկաւորս յերևանէ մինչև ի Թիֆլիզ, ուր պարտէ նա գնալ և ներկայանալ պարոն կուսակալին Վրաստանու: Առ այս շնորհս ունիմ հաւատացուցանել զսրբութիւն ձեր՝ թէ տիրացուս այս հարկաւոր է

Նորին Բարձր Գերազանցութեան վասն այնպիսի գործոյ, որ բնաւին ո՛չ պատկանի ո՛չ Աթոռոյն էջմիածնայ և ո՛չ այլ հոգևորական գործոց, այլ միայն հարկաւոր է վասն թարգմանելոյ յոյժ հարկաւոր թղթոյ ի միոյ լեզուէ, զոր գիտէ Թաղիադեանցն: Առ այս կցորդիմ թէ Թաղիադեանց վասն այսր գործոյ ո՛չ մնայ առանց վարձատրութեան:

Մանուցանելով զկամս պարոն կուսակալի՝ Վրաստանու ձերում սրբութեան, խոնարհարար խնդրեմ փութանալի յոյժ առաջն առ իս զյիշեալ տիրացուն Մեսրոպ Թաղիադեանց:

Իսկական վերապատուութեամբ և կատարեալ անձնընծայութեամբ շնորհս ունիմ մնալ:

Ձերդ Վեհափառութեան, ողորմած Տէր, Ամենախոնարհ ծառայ

Կեփազ Վասիլի Բեհրուզով

23 փետրվարի 1834 թվի. Երևան\*\*)

\*) Հայկական ՍՍԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Գիվանք. գործ № 89, էջ 4—5:

Գրութեան վրա կա հետևյալ նշումը. «Ի թարգմանութիւն ընկերութեան տարածողի, գրիստոնէական գիտութիւն ի Լոնդոնայ, ստացաք լուծումարի 28, 1834 թվի»:

\*\*) Նույնը, էջ 6—7:

Գրութեան վրա կա հետևյալ մակագրութիւնը.— Նկարալ Վասիլի Բեհրուզովի գիրն է, ստացանք ի փետր. 23, 1834:

Հովհաննես կաթողիկոսը իշխան Վասիլ Խեչբուզովի գրության համաձայն Թաղիադյանին ուղարկում է նրա մոտ. միաժամանակ իշխան Խեչբուզովի անունով մի կոնդակ է հղում, ուր նկարագրելով Թաղիադյանի բարեմասնությունները և Մայր Աթոռին մատուցած ծառայությունները, գնահատելով նահանգա-

պետին խնդրում է միջնորդել նորին կայսերական մեծության առջև Թաղիադյանին իր ուղորմածության որևէ շնորհին արժանացնելու համար: Այս կոնդակը Թաղիադյանի կյանքի ու գործունեության համար կարևոր նշանակություն ունի, ուստի բերում ենք ստորև.

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յովհաննէս Կաթողիկոս Ամենայն Հայոց և Մայրապոյն Պատրիարք Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի և Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի.

Ձերդ Բարձր Գերազանցութիւն  
Ողորմած Տէր

Վարժապետ Մեսրոպ Դավթեան Թաղիադեանց, մինն յանուանի ընկալաց Երևանու, յերիտասարդական դիտց անտի վարժեալ ի մարդս գիտութեանց զանազան արուեստից ի լեզու Հայոց. Անդղիադեոց և Լատինացոց ի Հնդկաստան անդ ի Կալկաթայ յիպիսկոպոսական ճեմարանի Անդղիադեոց: Հուսկ ապա լուծալ զազատութիւն աշխարհին Հայոց, վերադարձաւ այսր ի հայրենիս իւր ի Հայոց աշխարհ, ի 1831 ամի:

Մենք ևս ի բազմիշն Մեր յԱթոռ Հայրապետութեան Ամենայն Հայոց, ամենայն աշխատութեամբ և ջերմեռանդութեամբ ջանացեալ մուծանել յազգն, և մանաւանդ ի հոգեւորականութիւն զցանկութիւն ուսումնասիրութեանն, յորմէ զըրկեալ էին նորա ի պատճառս զանազան նեղսակրօնականց ի ձեռացն պարսից: Մեք սկսասց որոնել առ այս վախճան զարժանաւոր գիտնական անձինս, վասն որոյ և հրաւիրեցաք զնա (զԹաղիադեանն) զալ ի սուրբ Աթոռս. և կարգեցաք զնա վարժապետ Արուեստից ի Հոգեւոր ուսումնարանի Մերում ի պարսպի սուրբ Աթոռոյս: Ի միջոցի սոյն ժամանակի, սկսեալ ի 1831 ամէն մինչև ցայժմ նա պարապելով ի վարժարանի Մերում յուսումն համբակաց մերոց, մեծաջան աշխատութեամբ և կատարեալ ջերմեռանդութեամբ իսկապէս կարաց ցուցանել զերևելի զպտուղս իւրոց արդիւնաւորեալ աշխատանաց:

Ձերդ բարձր գերազանցութեան ամենախնամեալ ծառայ և աղօթարար  
Կաթողիկոս Ամենայն Հայոց Յովհաննէս

1834, մարտի 13

Ի սուրբ էջմիածին\*\*)

\*) Փակագծերում առնված բառերը կոնդակում չնկատվում է հեղինակի կողմից, մենք այն վերծանեցինք:

\*\*) ՀՍՍՐ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ

№ 57, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Դիվանը, գործ  
№ 50, էջ 8:

Երբ Թաղիադյանը նախապատրաստություններ էր տեսնում Վրաստանի կուսակալին ներկայանալու համար Թիֆլիս ուղևորվելու, այդ ժամանակ նոր շուղայեցիները 1834 թվի մարտ 16-ի թվակիր մի աղեր-

սագրով դիմում են կաթողիկոսին՝ խնդրելով Թաղիադյանին ուղարկել Նոր Զուլա՝ դպրոցը կարգավորելու համար. նրանք դիմումի մեջ գրում էին. —

Ամենախոնարհաբար անկեալ առաջի ահադհարա Աթոռոյ ձերդ սրբազնագոյն մեծի Տէրութեան բողարկեալ դիմօք մատչիմք ի համբոյր սրբասնեալ երկնաշու մարտիրոսապարացն յատկագոյն ձերումդ բազմախնամի:

Սւ մուծմամբ յերկիր՝ յառաջարկեմք զաղաչանաց խնդիրս յաղագս խղճալի մերազանց կողմանցս եղևոց, որք զանազսն տարաբախտությամբ և ազգի ազգի փոխադարձութեամբ անկայուն աշխարհի անյաշող դիպուածոց՝ կացեալ մնացեալ ցարդ ընդ խաւարամած տգիտութեամբ, վեր երևին անվարելու ազգ յաշ համակ տեսողացն:

Ձերդ բարձրագոյն Վեհափառութեան ծառայից ծառայ Յովնանէս եպիսկոպոս, յետին միաբան սրբոյ կաթողիկէ էշմիածնի.

Յաջորդ Չակոբոս վարդապետ\*)

Մենք տեսանք, որ Թաղիադյանը պատեհ առիթի էր սպասում էշմիածնից հետանալու համար: Վերադառնալով Թիֆլիսից նա իմանում է Նրին Նոր Զուլա հրավիրելու մասին. բոլոր միջոցները պործադրելով կարողանում է կոտրել կաթողիկոսի համառութիւնը ու ստանալ նրա համաձայնութիւնը: Այս մասին կաթողիկոսը հետևյալն է գրում Նոր Զուլայի առաջնորդին ուղղված իր պատասխան կոնդակում. —

«Ահա ըստ խնդրանայ ձերոց, զայս պիտանի մեզ ըստ ամենայնի, զպատուելի վարժապետն արուեստից և զխորհրդական գրագիր մեր՝ զՄեսրոպ Դավթեան Թաղիադեանց, սիրով արձակեալ առաքեցաք այդր, ըստ աստուածատուր իմաստից և մակացութեանց իւրոց, կրթել և հրահանգել զմանկունս ձեր յուսմունս պէս-պէս գիտութեանց, զոր և յորդոր լինիմք սիրով ընդունել և ըստ ամենայնի շահեալ և մխիթարեալ պահել վասն ձերոյ բարութեան»\*):

1834 թվի հունիսի սկզբին Թաղիադյանն իր հետ վերցնելով կաթողիկոսի սուլն կոնդակը ճանապարհվում է Նոր Զուլա:

Դեռ նոր էր դուրս եկել Թաղիադյանն էշմիածնից, երբ ստացվում է Զուլայից Հովհաննես արքեպիսկոպոսի դրուկը, որի

մեջ թեմի դրուկյան մասին մի քանի տեղեկություններ հաղորդելուց հետո նա խնդրում էր կաթողիկոսին Մեսրոպ վարժապետին Զուլա ուղարկել. «ԶՄեսրոպ վարժապետն խնդրել տեղւոյս մերազնեայցն, առաքել աղաչեմ և ազատել զիս զծառայս ձեր ի թախանձանացն սոցա»\*\*):

Թաղիադյանի ճանապարհորդությունը էշմիածնից մինչև Զուլա տևում է երեք ամիս: Տեղ հասնելուց թեմի առաջնորդն ու հայ հասարակությունը նրան պատվով ընդունում են: Նա անմիջապես ստանձնում է «Ամենափրկչան ճեմարանի» ղեկավարությունը և ավանդում է պարսկերեն ու արաբերեն լեզուները: Առաջնորդը հատուկ շնորհակցանակով հնդկահայերին ծանուցում է Թաղիադյանի Զուլա ժամանելու և ճեմարանում հաստատվելու մասին: Թաղիադյանի Զուլա հասնելու երրորդ օրը ստացվում է կաթողիկոսի № 340 կոնդակը, որի ամբողջական բովանդակությունը մեզ անհայտ է, սակայն Թաղիադյանի նամակում բերված մեջբերումից պարզվում է, որ Թա-

\*) Լժ., Մեսրոպ Թաղիադյան «Գործ» ամսագիր 1917 թ. № 9—10, էջ 106:

\*\*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, Ամենայն Հայոց կաթողիկոսի Դիվանը, գործ № 80, էջ 9:

\*) Լժ.— Մեսրոպ Թաղիադեան, «Գործ» ամսագիր 1917 թ., № 9—10, էջ 109:

անը չի լսել կաթողիկոսի խորհրդները և ծնունդ մնալու մասին, որի համար էլ պետք է վշտացած է։ Քաղիադյանն Վոնդակին պատասխանում է մի ընտանի նամակով, որի մեջ ի միջի այլոց լինել կերպով գրաւորված է նրա ռուս-օրինակացիայի շերտ պաշտպան լինելու հայերի փրկութունը կապում է ռուս վրդի հետ։ Այդ գաղափարը նրա մոտ էր, դեռ 1828 թվին, Երևանի պարսկա-

կան լծից ազատագրվելու առթիվ, իր հայրենակիցներին գրած ողջույնի նամակում արծարծված ենք տեսնում այդ միտքը։ Քաղիադյանն իր նամակում հայտնում էր կաթողիկոսին, որ ինքը դիմել է Վրաստանի կուսակալին՝ խնդրելով պաշտպանել հայերի իրավունքները Պարսկաստանում ու խորհուրդ է տալիս կաթողիկոսին, որպեսզի նա էլ հետամուտ լինի այդ գործին։—

Աստուածարեալ եպիսկոպոսապետի ամենայն Հայոց լորձածագոյն Տեառն և բարեհաբի երկնաշու սուրբ գաղապարացն համբոյր ողորդապարտ շեմեռանդութեամբ.

ամար 340 կոնդակ սրբազնասարքութեան լոյ հասնալ այսր զկնի երից աւուրց հաւելոյն իմ այսր. խնդութիւն շատ արար իողնեալ հոգւոյս վասն աստուածանման ւթեամբ զիջանելոյ Տէրութեան Ձերոյ խնդիր և գրելոյ զյանձնարարութիւնսն իմ առ լիակատար դեսպան ամենառում կայսրութեան Ռուսաց ի Դարեժէ։ Այլ չիմ յոյժ, զի ի սակա աննեկայութեանում ի Դարեժոյ բարձր սրբազան Նիկոլոս Արքեպիսկոպոս ըստ բարձրագոյն ամանի Տէրութեան Ձերոյ, յետս դարձուալ է զայն թուլթ։ Յաւիմ, վասնզի կարօւմ յոյժ պաշտպանութեան Ամենաողորմութեան, մինչ ցարդ Հայք անտէրոնը արդ շրջէին յամենայն ուրեք, բայց լծմ, ըստ որում ողորմութեամբ բարձրելն բախտաւորեցաք ունիլ մեզ թաղաւոր յայսն, պարտ է մեզ յամենայն ուրեք աշտպանութեան։ Նորա ապաստան լինիլ, ի մասին այսորիկ գրեան արարի յերեանայ ի Տփղիզ, առ նոյն ինքն բարձր գեաղանց կուսակալն Վրաստանի, և առ գեապատիւ Յակոբ Շահան Զրպետեան և անձնեցի եղբօր իմոյ Յովհաննու տանիլ նձամբ ի Տփղիս, բայց անկրթութեան նոա յիրս զգուշալիս բազմօք անյոյս կացուանէ զիս։ Կոյր սակա աղերս արկեալ առան Քահանայապետական գթութեան Ձերոյ, ամենախոնարհաբար խնդրեմ գրել նորին բարձր գերազանցութեան յաղագս բանիս լսորիկ, զի որովհետեւ խօսեցեալ և պատուաստեալ է յառաջագոյն, շունի նեղութիւն ատ պատճառել սրբազնասարքութեան Ձերոյ, այլ բաւական է միմիայն յայտարարութիւն Ձեր ի պսակել զիմն յոյս։ Այս պաշտպանութիւն Տէրութենէ, որում այսչափ կաթոզնի եմ ի խնդիր, թէ ո՞րքան օգուտ քերէ անձին իմոյ, և Տէրութեանն ևս, կա-

րէք լաւապէս իմանալ ի հաւատարիմ գաւակէն Ձերմէ ի Մկրտչէ Քարտաշեանց, և առնել ողորմածաբար։

Իրէ սրբազնասարքութիւն Ձեր. Բենեդեկով Ձերոցդ երիտասարդական կրից, չկարացիք իմանալ զգին շնորհաց և աշխատանաց Ձերոց, միանգամայն և զարժողութիւն մերոց հայրական առ Ձեզ գթոց։ Դիտէ Աստուած, զիտցեք և Դուք, ողորմածագոյն Տէր, զի իմ շերմեռանդութիւն առ սուրբ Աթոռն ամենայն Հայոց և առ Տէրութիւն Ձեր անխարդախ էր, և է, և եղիցի միշտ։ Բայց այն զի զանազան հանգամանք տեղույդ և անձին իմոյ չկարացին համեմատիլ իրերաց, ըստ արժանեաց անուան և փառաց Ձերոց և իմ, ի վեր երեւցուցանել զարդիւնս աշխատանաց իմոց, լաւ համարեցայ ինձ զայս տաբաղիր օտարութիւն. ցուցանել թէ արդեօք կարիցեմ վերստին առնել, որպէս արարեալս էի, թէ ո՛չ։

Ողորմածագոյն Տէր իմ, ե՛ս վատ, ե՛ս ամենայն բո՛ւմբասանաց արժանի, իսկ Դուք զլուխ եկեղեցւոյ և Ազգի մի ողջոյն, ունի՞ք արդեօք զարժանին Ձեզ զերջանկութիւն և զանդորրութիւն,— ո՛չ։ Ազգ՝ որ աստեաց զիւր զլուխ, ատելի է Աստուծոյ և մարդկան, ցանկայ, այլ ո՛չ տեսանէ զյաջողութիւն։

Երեքամսեան ծանր, վայելուչ, և իշխանական ճանապարհորդութեամբ հասի ի նոր Զուղա, ուր բարձր սրբազան Յովհաննէս Արքեպիսկոպոս հոգեւոր Հայր իմ և ամենայն հասարակութիւն Մերազանց, ի պատիւ աստուածարեալ Տէրութեան Ձերոյ, սիրով մեծաւ րնկալեալ յանձնեցին ինձ զիրեանց Ամենափրկչեան ճեմարան, որոյ թիւ տշակերտաց հասնի այժմ ցհարիւր վաթսուն, որք բաժանեալ ի միտասան դասակարգութիւնս, ընթեռնուն զհայ, զպարսիկ և զանգղիացի արհեստս ազատականս։ Ես

ինքնին ուսանիմ զպարսիկ և զարաբացի լեզուս, Յամինայնի մխիթարեալ:

Նամականի արար սրբազան առաջնորդ տեղւոյս առ մերազնեայս Հնդկաստանի, ժանուցանել նոցա զհասանիլ իմ այսր և զվերահաստատութիւն ճեմարանին. յուսամք ի մօտոյ ընդունիլ պատասխանիս ի նոցանէ և երևցուցանել պտուղս Հայ տպարանի հաստատելոյ ի Զուլայ:

Երկոքին աղտարմայ վարդապետք, Յով-

հաննէս և Ստեփաննոս որչացեալ ի Զուլայ, որպէս գրեալ է Տէրութեան Ձերում Առաջնորդ տեղւոյս, բազմօք գայթակեցուցանեն զԱզգ մեր: Եթէ շնորհ արասցիք գրել առ սուլթան Մահմադ Միրզայ Արքայորդի տեղւոյս, և առ սէիդ Մահմադ Բադր՝ մուշտահիդ, թէ մեք առաքեցաք այդր ուսուցիչ զՄեսրութը, որ բաւական է ուսուցանել, և նոքա շին հարկաւոր մնալ յազգի մերում, անխափան խնացեն նոքա:

Աստուածարեալ Քահանայապետի իմոյ և ռանդ ծառայ

Տեառն ամենախոնարհ և ամենաբարեւոյ Ս. Դ. Թաղիադեանց

յԱսպահան

ի Նոր Զուլայ

1834, սեպտ. 14\*)

1835 թվին փետրվարի 5-ին Զուլայից Զուլահաննես եպիսկոպոսի կաթողիկոսին ուղղված գրութեան մեջ կան տեղեկություններ, որոնք արժեքավոր են այն ժամանակվա պարսկահայ կյանքի ուսումնասիրման համար: Գրութեան մեջ ասված է, որ Զուլայի հայերը 1834 թվի հունիսին մի հանրագիր են ստորագրել և ուղարկել էջմիածին, որպեսզի այն ուսերեն թարգմանվի և ներկայացվի Վրաստանի կուսակալին: Հանրա-

գրում խնդրվում էր կուսակալին՝ հրահանգել Պարսկաստանի ուսաց դեսպանին՝ պարսկահայերի իրավունքները պաշտպանելու Քանի որ ութ ամիս էր անցել արդեն ու ոչ մի պատասխան չէր ստացվել այդ առթիվ, ուստի խնդրվում էր արագացնել այդ գործը: Գրութեան վերջում Թաղիադեանի անունից ամենախոնարհ ողջույն էր հաղորդվում կաթողիկոսին: Ստորև բերում ենք այն.—

#### Սրբազնասուրբ Վեհապետ Ողորմածափայլ Տէր.

Յամսեան յունիսի ամին 1834 գրեալ եմք ողորմած Տէրութեան Ձերոյ և համար 79 գրութեամբ մերով հանդերձ բազմակնիք աղերսագրով հասարակութեան տեղւոյս պարունակելով ի նմին խնդրեալ եմք տալ թարգմանել ի Ռուսաց լեզու և յայտնել ուր հարկն է: Այլ մինչ ցարդ շունելով զբաւարարութիւն առ այն՝ մնամք ի մեծ տարակուսի Ազգ մեր աստ չև զերծեալ և դառն տառապանաց անտի սովու և սղութեանց և ահա՛ Արքայ եկեալ աստ մեծ բազմութեամբ զօրաց՝ մեռաւ երկիրս, խառնակեցաւ, և երթեմք ճանապարհաց փակեցան, որով դարձեալ անհնարին թանկութիւն ամենայն իրաց եղեն, և ժողովուրդք մեր, թէև անվրնաս յայլ հարուածոց, կրեն զմեծ անձկութիւնս:

Մեք հանդերձեալ եմք, եթէ Տէր յաջողեցնէ յետ երկուց ամսոց ի բանիլ գարնան ներկայանալ նորապսակ թագաւորին ի Թեհ-

րան, վասն ապահովութեան մերազանց տեղւոյս, առ որ ամենախոնարհաբար խնդրեմք, ողորմած Տէր, զի շնորհ արասցիք թարգմանել տալ զաղերսագիր հասարակութեան տեղւոյս առ Ձեզ, և առաքել ուր հարկն է, և խնդրել զի գրեսցի լիակատար դեսպանին Ռուսաց ի Պարս՝ օգնական լինիլ մեզ, և կամ սրբութիւն Ձեր անձամբ անձին գրեսցէ առ դեսպանն օգնել մեզ, որով դիւրութիւն լիցի՝ գտնեալ տառապնոցս աստանոր ի պատիւ փառաւորեալ Անուան սրբութեան Ձերոյ:

Իսկ այժմ զօրք Նորին Արեգակնափայլ Մեծութեան Մահմադ շահի պարսից, ընդ սպարապետութեամբ Լենզի անգլիացւոյ վնշտասան հզօր թնդանոթօք հասին այսր, որով առ փոքր մի զհոգի առաք, և ունի գնալ ի վրա Շիրազու:

Այլ տակաւին կրկնեմք զամենախոնարհ խնդիր մեր առ սրբազնասրբութիւն Ձեր, ողորմած Տէր, կամ միջնորդել առ նորին բարձր գերագանցութեան կուսակալին՝ Վրաստանեայց՝ զի գրեսցէ, կամ անձամբ

\*) ՀԱՍՏ Գետական կենտրոնական արխիւ, ֆոնդ № 57, Ամենայն Հայոց կաթողիկոսի Դիվանը, գործ № 7, էջ 33—34:

գրեալիք առ լիակատար դեպքանն Ռուսաց  
ի Պարս, օգնել մեզ յայսմ խնդրագործու-

թեան մերում առ Արքայ վասն տառապա-  
նաց ազգիս մերոյ:

Մենամ իսկական շերմեռանդութեամբ սրբազնաստուր Վեհապետութեան Ձերոյ  
Յովհաննէս եպիսկոպոս, միաբան սրբոյ էջմիածնի:

1835, փետրվարի 5

ի Նոր Զուլա

Բարերարեալն ի ձեռն Մեսրոպ վարժա-  
պետ Դաթիկեան Թաղիադեանն շերմեռանդ  
հոգով զսուրբ դարշապար Տէրութեան ձե-

րոյ համբուրելով կայ ի հարազատութեան  
միշտ սոյրբ օծութեան ձեր\*):

Թաղիադեանը Զուլայում մնում է մոտ  
երկու տարի, այն է 1834 թ. սեպտեմբերից  
մինչև 1836 թ. մայիսը: Սկզբնական շրջա-  
նում այնպիսի շերմեռանդութեամբ է լծվում  
դպրոցի բարեկարգման գործին, որ իր  
նախկին աշակերտներից 30 հոգի, որոնք  
երկար ժամանակ կաթողիկոսների վանքում  
էին սովորում, թողնում են այն ու վերա-  
դառնում Ամենափրկչյան ճեմարանը: Բացի  
այդ, ամուսնացած մարդիկ էլ սկսում են ա-  
շակերտել նրան: Սակայն նրա ոգևորու-  
թյունը երկար չի տևում. թեմի առաջնորդն  
իր մի քանի համախոհներով ինտրիգներ է  
յարում նրա դեմ: Թաղիադեանն այլևս ան-  
կարող լինելով հանդուրժել նրանց ոտնձե-  
րությունները, թողնում է դպրոցի տնորի-  
նությունը: Ինչը ամիս անգործ, հուսալք-  
ված վիճակ ապրելուց հետո նա ստանում է  
կաթողիկոսի խորախուսիչ կոնգակը, որն  
այնպիսի ազդեցություն է գործում Թա-

ղիադեանի վրա, որ, իր ասելով, մոռանում է  
իր անցյալի զրկանքներն ու անիրավ զըր-  
պարտությունները ու նորից հանձն է առ-  
նում ճեմարանի ղեկավարությունը: Սակայն  
հազիվ շուրս ամիս կարողանում է նա պաշ-  
տոնավարել. առաջնորդը նրան հրավիրում  
է իր մոտ ու հայտնում, որ ի վիճակի չէ  
շարունակելու դպրոցի պահպանությունը:  
Թաղիադեանը պահանջում է տալ իրեն հա-  
սանելիք աշխատավարձը, որպեսզի ճանա-  
պարհածախս ունենա էջմիածին փոխադըր-  
վելու համար, բայց առաջնորդը հրաժար-  
վում է վճարելուց: Թաղիադեանը դիմում է  
Պարսկաստանի Ռուսաց դեսպանին, որը  
գործը քննելով հազիվ կարողանում է պար-  
տադրել վճարելու նրան հասանելիքը: Թա-  
ղիադեանն առաջնորդի արարքների մասին  
մանրամասն նամակ է գրում կաթողիկոսին,  
նաև իր պատրաստակամությունը հայտնե-  
լով էջմիածին վերադառնալու:—

### Դերագոյն Քանաւայապետի ամենայն Հայոց Ողորմածագոյն Տեառն և բարեւարի ամենախոնարհ յայտարարութիւն

Բարձրագոյն կոնգակ յորդորանաց հա-  
մատարած սուրբ Հայրութեան Ձերոյ թուեալ  
ի 26 նոյեմ. 1835, այլովն հանդերձ, շնոր-  
հեցաւ ինձ ի ձեռն Առաջնորդի տեղույս,  
ի 10 մարտի, զոր ընկալեալ իբրև որդի հա-  
րադատ, ի հնազանդութիւն պատուիրանացն  
պարունակելոցն ի նմա մեծահանգէս տօն  
ուրախութեան կատարեցի ի տան իմում,  
որպէս երբեմն Զաքէոս ընդունելով զՏէրն  
մեր ի տուն իւր: Մոռացայ զանցեալ զըր-  
կանս իմ. և զանտանելի զրպարտութիւնս  
եղեալս ի վրայ իմ, ի բաց եղի զամենայն  
կրճիմն անիրաւութիւն, և մասնաւոր վար-  
ձու ո՛չ միայն զգործն ճեմարանին յանձն  
առի, այլ և զատենադպրութիւն ևն:

Բայց արդ տխրութեամբ գրեմ, զի սրբա-  
զան առաջնորդն առաւել հետեւելով կրից

և երեխայից, որոց խիստ է կաթողիկոս վհա-  
տեցաւ ի յաջողութեան անդ իւրում, զի  
այնինչ ըսկսաւ լուր պայծառութեան ճեմա-  
րանին տարածիլ, և ի տեղեաց տեղեաց քա-  
ղել զարդիւնս օգնականութեան Ազգին, նա  
ի շնորհս մանկահասակ պապատուրի իւրում,  
որ ճեմարանի անուամբ ելեալ ի վանաց, գը-  
նայր ուր կամէր. և զոր ինքն զսպել չկարէր,  
և ես խոստացայ գանակոծ զնա առնել,  
երկնչելով եպիսկոպոսին, թէ մի՛ գուցէ ի  
դանել իմ զնա ի վեր ելցեն իւր ամօթանք,  
առաքեաց հան զնա ի ճեմարանէ, և զկնի  
տասն աւարց, ի տօնի մեծի գատկին. կո-

\*) 2400 Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ  
№ 57, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Դիվանը, գործ  
№ 80, էջ 10:

լեալ զիս առ ինքն, փոխան վարժապետական պարգևաց ասաց թէ «այլևս ո՛չ կարէ պահել զճնմարանն իւր»:

Առ այս իբրև մտաբերեցի ելանել աստուած տամբ հանդերձ առ ոտս ձեր և սրբազան առաջնորդն ամենևին անմասն ցուցանէր զինքն յօգնականութենէ ծախուց վերադարձի իմոյ, յաստուածուած իմն գողջի՛ք. եկն հաս աստ պարոն Տուրնով, ատենադպիր և երկրորդ լիակատար դեսպանութիւն Ռուսաց ի Պարս: Սա հարց ինձ, թէ զի՞նչ գործ ունիս. ասացի յետ 9 ամիս յանցեալ տարի անգործ կալուցս և յետ շորս ամիս վերստին վարժապետելոյս ևն, ներկայ կրկին անգործ կամ: Ապա եհան զթուղթ մի ի սրբազան եպիսկոպոսէն գրեալ առ բարոն Բօդէ երկրորդն դեսպանութեան. որ պարունակէր զի ներքոյ հնգեակ եպիսկոպոսավայել ճշմարտութիւնքս:

ա. Թէ ինքն պահեալ իցէ զիս յէջմիածին ինն ամ, իւր յատուկ ծախիւք:

բ. Թէ ինքն, ո՛չ միայն զծախս ճանապարհի անտուած ի Հինդ, այլև զտասնամեան ուսման լեզուաց վճարեալ իցէ զծախս:

գ. Թէ Մեսրոփ անգործ գոլով յէջմիածին, ինքն իբր ողորմութիւն, բերեալ իցէ զնա այսր, վասն ապրուստի:

դ. Թէ ի միջոցս 8 ամսոց հասուցեալ իցէ մերձ 202 թուման:

ե. Թէ «անարժան և անպատիւ անձն է, չունիցի ոք ընդ նա գրութիւն»:

Զայնոսիկ եպիսկոպոսավայել ճշմարտագրութիւնս նորա, եղծի օրինավոր ապացուցութեամբ և ինքն ի վերջոյ, պարտաւորեցաւ ի քննութիւն պարոն Տուրնովի անել, թէ ինքն ամենևին չէ պատասխանեալ զիս

ի ճնմարանէ». պատասխանեաց պարոն Տուրնով, ուրեմն եթէ շնա պատասխանեալ և կամիս պահել, ուրեմն գրեալ գիր կապակցութեան, և ես ձեռագրի ձերց ի նմա յառաւել հաստատութիւն. եպիսկոպոսն կարի յօժարութեամբ խոստացաւ այլ վաղուի ժողովեալ զիւր վարձեալ անձինս, զնդիա Յովհաննէսեան, զՂևոնդ Աւագեան, զԴորգին Մանուկեան և զԿարապետ Գիւզատեան, որք ո՛չ այլ ինչ են, եթե ո՛չ սոսկ գինեկաճառք. ուսոյց նոցա ասել, թէ ազգն ո՛չ ընդունի զլինել Մեսրոփայ ի վարժապետ. զոր և ինքն ապա գրով ետ պարոն Տուրնովի. ընդ որ զայլապեալ նորա, գրեաց առ ինքն առաքել զայնոսիկ, որք զայն ասացին. եպիսկոպոսն մոլորեցաւ. մինչ օրինաւոր պատասխանուց ևս անբաւական լինիլ. Երկիցս գրեաց պարոն Տուրնով, և զգարձն շնկալեալ՝ գրեալ առ խոսրով խան, և հանեալ ի նմանէ զմուհասիլ, բունն իշխանութեամբ պահանջեաց 40 թուման զծախս վերադարձի իմոյ ի հասարակութիւնէ տեղւոյս, զոր ամենայն օրինօք պարտ էին, զոր ընկալայ և ելանիմ այսօր աստի առ ոտս Ձեր, կամի՛ք պահեցէ՛ք, կամի՛ք զմեղս մանկութեան իմոյ յերես հանելով՝ մի՛ պահէք, այլ ես զամ տամբ հանդերձ, մնալ յաւիտեանս յաւիտենից:

Զայսոսիկ միայն նորա ընդ իս արաբք, այլ առաւել քան զսոցն ընդ այլոց. կամ լուեալ էք, կամ լսելոց էք ի գրութեանց անտի լիակատար դեսպանութեան Ռուսաց ի Պարս: Եւ ես վկայեմ առաջի Աստուծոյ և մարդկան, զի ոգի այսքան ընդդէմ ճշմարտութեան, և զակատեալ մանկուտոյ, երբէք ոչ տեսի:

Մնամ ամենայն հաւատարմութեամբ

Ձերդ սրբազնասրբութեան ողորմած Տէր

ամենախոնարհ ծառայ Մ. Դ. Քաղիաղեանց

ի Ջուղա

1836

մայիսի 5, Ե(ԴՊՊ)

Քաղիաղայանի աշակերտներից նոր ջողայեցի Հովհան Հարովթունյանը հետաքրքիր հիշողութիւններ է թողել իր ուսուցչի մասին: Նա գրում է. «Ընթացաւ պարոն Մեսրոփի վարժապետ լինելն ըշկոյն ցնծմանէր, յաւել քան 150 աշակերտք կային,

որոց յաւել պակաս 15 անձինք հասակաւոր պարոնայք քերականութիւն ուսանէն: Ինչ քահանայք, երկու վարդապետք ևս վարժապետ Մեսրոփն իւր լաւագոյն ջանքն գործ դնել վասն աշակերտաց յառաջանալոյ, և յառաջանին, բայց ջողայեցիք արժեքն չլմացան, այդ աղաքաւ վարժապետի սիրտն սառեց, հրաժարեց իւր պաշտօնիցն, վերջն ջողայեցիք զղջացին աշդպիսի վարժապետ կորուսանելն:

\*) ՀՍՍՐ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ № 57, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Դիվանը, գործ № 7, էջ 35—36:

Վարժապետի մեծ պակասութիւնն այդ էր՝ ինքզինդի պէս թունդ բնաւորութեան տէր անձն էր, անկանոն բան չէր կարող տեսանել, զոր ինչ որ կայր կուգեր արդարացի լինէր։ Որովհետեւ ինքն ուսնալ անձն էր՝ չէր կարող ջուղայեցոյց գոռող բնութիւն տեսանել, միշտ ցանկայր ուսնալ անձանց հետ ընկերակցութիւն պահել, այդ էր, որ ջուղայեցիք յատուկ յարգանք ցոյց չուէին վաժապետին, նա ևս հրաժարուեց իւր պաշտօնիցն։

Այդ անտեղի զրպարտութիւնք, որ ասնն միշտ հետեւէր իւր զրօսանաց, զինի խմէր, գաւազանէր, երբէք չեմ տեսած կամ լսած...

Ասնն իբր աշակերտաց ծնծ կտայր, երբէք ո՛չ։ Սաստիկ ռահմ ունէր, որ բոլոր աշակերտքն կզգային առանց ծնծ տալոյ։ Պատահէր ով ոք անհնազանդ լինէր ծնողաց կամ սուտ խօսէր, կոչէր, դելանչին կշալակէր, երկու ռոտան տայր, նոքա որ անփոյտ կային ուսանելոց, ծաղրածու մի գլխարկ դնէր նոցա գլխին և ամանչելով միւս անգամ հետեւէին ուսմանցն...

1836 թվին Թաղիադյանը թողնում է Զուղան և էջմիածին դնալու փոխարեն իջևանում Թավրիզում։ Այստեղ անգլիական հոյակապտոսի միջնորդութիւնով նա անգլիերեն լեզվի դասատու է կարգվում արքայազն Մելիք-Ղաստում Միրզայի մոտ։ Բայց տեղացի մի քանի հայերի խորհրդով թողնում է այդ պաշտոնը և ստանձնում Թավրիզի Հայոց ուսումնարանի հայկաբանութեան ուսուցչի պաշտոնը՝ տարեկան 60 թուման աշխատավարձով։ Սակայն այս շնչին գումարն էլ նա կանոնավոր չէր ստանում և աղքատութեան մեջ գտնվելով հանդերձ ստիպված է լինում թողնել և այս դասերը։

Թաղիադյանն իր թափառումները շարունակելով 1838 թվին նորից էջմիածին է գալիս։ Այս անգամ էջմիածնում նա երկար չի մնում. միաբաններից ոմանք ընդհարվում են նրա հետ հաճախակի. մի օր էլ զայրացած նա վեհարան է մտնում, բայց ոչ ոքի այնտեղ չգտնելով սեղանի վրա նըկատում է մի հնդկական հալածապակյա թրքաման, որը թանաքամանի տեղ էր օգտագործվում. մի կտոր թուղթ վերցնելով վրան գրում է. —

Երբ քիմամն քանամամանն

Դարձնալ ետես յայս վեհարան,

Զի՛նչ այլ քեզ յոյս երջանութեան

Փախիւր փութով Մետովպ Թաղիադեան։

Դրածը թողնելով սեղանի վրա և մնաւ բարով ասելով էջմիածնին, նա ուղևոր-

վում է դեպի Կ. Պոլիս, ուր հասնում է 1838 թվի մայիսին։

Այնուհետեւ սկսվում է նրա թափառումների ու հալածանքների երկրորդ շրջանը, որը դուրս է մեր նյութի շրջանակներից։

Թաղիադյանը իր մահկանացուն կնքում է Պարսկաստանի Շիրազ քաղաքում 1858 թվին։

Թաղիադյանի համառոտ կենսագրականը գրել է Կալկաթայի Հովհաննես քահանա Խաչկյանը, որն անձնական հաշիվներից դրոված նրան ներկայացրել է որպէս արբեցողի, խռովարարի, անբարոյականի, որն իր անհաշտ ընավորութեան համար մարդկանց հետ վարվել ու երկար մի տեղում մնալ չէր կարող։ Մինչդեռ Թաղիադյանի աշակերտներից Հովհաննես Շահնազար Սարգսյանը ապացուցում է, որ Խաչկյանի ասածները զրպարտութուններ են։

Չափազանց բեղմնավոր գրչի տեր է եղել Թաղիադյանը. իր աշխատությունների մասին հետեւյալն է գրում Թավրիզի իր բարեկամներին՝ Անդրեաս Ուսպեյանին և Ստեփանոս Ներսիսյանին. «Նուազութիւն ազգի մերոյ ի Հնդկաստան, պարտաւոր առնելիս ապաստան անկանիլ ի շնորհս հեռաւոր բարեկամաց։ Վասն որոյ համարձակիմ պահպանել ի սմին զօրինակ շրջաբերականի իմում յաղաքս տպագրութեան պատմութեան հին Հնդկաստանի, զորոյ նման չիք բնաւ յազգի մերում... Տասնևութ հատոր գրեանք՝ միայն յինչն շարադրեալք պատրաստի կայ վասն տպագրութեան, և կարօտի օժանդակութեան ազգասիրաց մերոց զոգամենայն տեղիս։ Նի՞է շնորհ արասցիք զոնեա դուզնաքիւք օգնել ինձ, ուրեմն նուիրեալ զկեանս իմ բովանդակ ազգային օգտի, պարապեցայց ի սմին, առանց ակնկալութեան աշխարհիկ շահոց։

Սկսեալ ի 1827-էն մինչև 1840 մեծահռչակ Աթոռն Հայաստանեայց Ս. էջմիածին, իւր հինգ հարիւր միաբանիւք և համօրէն ազգիս եկամտովն շտպեաց այնքան գրեան, որքան նուաստս միայնակ։ Գրեանքն զորս նոքա տպեն, չեն այլ ինչ, քան ժամագիրք և Շարական, զորս ինքեանք ոչ շարագրեցին։ Բայց հմայինքն բոլորք են նոր և առաւել ևս պիտանիք։ Արդ եթէ նոքա ձերոց ողորմութեանցն կարոտին, և զան և առատապէս վարձատրին, ընդէ՛ր ոչ և նրաստըս, որ քան զամենեսին զնոսա առաւել վաստակեցիւ։

Հայ գրականութեան համար Թաղիադյանի երկերն, անկասկած, արժեքավոր ներդրում են հանդիսանում։